

նել<sup>13</sup> կամք լիցի՝ թէ Ջուղայեցիքն միարանին ընդ մեզ: Եւ այլ խորհուրդ բազում վասն Աստուծոյ օրինացն. եթէ հաճոյ է Քրիստոսի Աստուծոյ մերոյ, եղիցի աղօթիւք, ապա թէ ոչ՝ կամք Տեառն:

Դարձեալ Սողոմոնն ոչ մոռացաւ զկտակն հօրն իւրոյ Դաւթի վասն Սիմէի. զիա՞րդ ես մոռացայց զաւետարանն Քրիստոսի կամ զաքսորանք որ վասն օրինացս Աստուծոյ եղեւ: Ոչ է պարտ մեզ շատ խօսել, այլ զորինչ կամք Աստուծոյ իցէ, զնոյն առաջնորդեսցէ մեզ աղօթիւք սրբութեանդ: Ողջ լերի Տէր սրբութեամբ, Հայր իմ հոգեւոր:

Գրեցաւ ի թուին Հայոց ՌԿԴ. սեպտեմբեր ամսոյ ԺԹ. օրն երեքշաբթի:

Մօհօր յիշխանին

Տ. Կ.

Մօհօր Մովսէսին

Տ. Կ.

Մովսէս վարդապետի այս թղթէն կը տեսնուի յայտնապէս թէ ի՛նչ ծրագիրներ կը զրաղցնէին զինքը: Առանց վախնալու աքսորէ կամ հալածանքէ նուիրուած էր քարոզչութեան, վերականգնելու Հայոց եկեղեցին ի զլուինն եւ յանդամս:

<sup>13</sup> Այսպէս յօրինակին: Սօսքն անշուշտ երկու կաթողիկոսներու իշխանութիւնը չեղոքացնելու մասին է: Հմմտ. Դաւր. 218: